№ 23 Փետրվարի 10 (22) 1881 Փետրվարի 10 (22) № 23

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար. վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"
ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
1881 թ-ին
(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլի, կէս տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3. ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլի։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թող իրանք մտածեն։—Ներքին տեսութիւն։ Գօրիում օրիորդական պրոգիմնազիայի բացման մասին։ Նամակ Բագուից։ Նամակ Խրամբազրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Քրդահայք։ Նամակ Թիւրքիայից։—Խառն լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ԹՈՂ ԻՐԱՆՔ ՄՏԱԾԵՆ

—

Այս րոպէիս ամբողջ Թիֆլիսը հետաքրքրող հարցը այն քննութիւնն էր, որ ձայնաւոր Զուբալովի առաջարկութեամբ նշանակվեցաւ դումայի կողմից քաղաքային գանձարանի վրա։

Քննութիւնից երևաց որ հաշւապահութիւնը մեր քաղաքային վարչութեան մէջ ամենանահապետական է, կամ աւելի լաւ է ասել ոչինչ հաշւապահութիւն չը կայ։

Գանձարանի մէջ փողը պակաս գտնվեցաւ, քան թէ սպասելի էր։ Վարչութեան բոլոր անդամները, քարտուղարը, բոլոր ծառայողները չորս, հինգ ամիս առաջ կանխիկ էին վեր առել իրանց ռոճիկները և այդ ռոճիկները ոչ մի տեղ արձանագրված չէին վարչութեան մատեանների մէջ, այլ գտնվեցան միայն ստացականների, կամ որ և է գօկումենտների տեղ թղթերի կտորներ, առանց ստացման թուի, և այլն։

Պատմում են, թէև մենք հրաժարվում ենք այդ տեսակ պատմածներին որ և է հաւատ ընծայել, որ ռոճիկները ամենևին տուած չէին կանխիկ, այլ իբր թէ քաղաքային վարչութեան անդամները, երբ գանձարանի վրա քննութիւնը յանկարծակի կերպով նշանակվեցաւ, վճռեցին կաստային պակասորդը լրացնելու նպատակով ձևի համար բաժանել իրանց մէջ պակաս լինելու գումարը, որպէս թէ նրանցից իւրաքանչիւրը մի քանի ամսվայ ռոճիկը կանխիկ էր ստացել։ Դրանով են բացատրում պատմողները, որ կանխիկ վեր առած ռոճիկների գումարի նշանակելը կաստայի մատեաններում անհնարին եղաւ, որովհետև նոյն երեկոյ, երբ դումայի կարգադրութեամբ վճռվեցաւ յանկարծակի վերաքննութիւնը, գանձարանը իր բոլոր դրքերով կնքվեցաւ։

Մենք կրկնում ենք որ մենք այդ տեսակ լուրերին հրաժարվում ենք հաւատալ և աւելի հաւանական ենք համարում այն, որ առհասարակ մեր քաղաքային վարչութեան հաշւապահութիւնը անկարգ էր, իսկ անդամների յարաբերութիւնը դէպի գանձարանը չափից դուրս նահապետական և, եթէ կարելի է ասել, ընտանեկան էր, այնպէս որ երբ պարոնները կամենում էին, միշտ հնար ունէին գանձարանից, առանց ստացականի, իրանց մի քանի ամսվայ ռոճիկները կանխիկ ստանալու։

Զը նայելով քաղաքային դեկավարների այդ տեսակ օտարոտի և բուն ընտանեկան յարաբերութեան դէպի քաղաքային գանձարանը, երբ դումայի վերջին նիստի ժամանակ վերաքննող յանձնաժողովը ներկայացնում էր իր զեկուցումը, գտնվեցան բազմաթիւ ձայնաւորներ, որոնք յանձն առան պաշտպանել քաղաքային վարչութեան հաշւապահութեան ձևը, հաւատացնելով, որ այդ հաշւապահութիւնը օրինակելի է։ Նշանաւոր է, որ այդ անկանոն հաշւապահութեան դէմ ամենից քիչ բողոքեցին նոյն իսկ այն մեր ձայնաւորները, որոնցից, որպէս մասնագէտներից, մենք ամենից աւելի իրաւունք ունէինք սպասել այդ տեսակ անհոգ, անկանոն, անճիշդ և վտանգաւոր հաշւապահութեան ձևի խիստ, արդարադատ, անխնայ քննադատութիւն և դատապարտութիւն, քանի որ նրանց, այդ մասնագէտներին, ամենից լաւ յայտնի պէտք է լինի թէ ինչ բան է կանոնաւոր և ինչ բան է անկանոն հաշւապահութիւնը։

Զուբալովի խօսքերի և բողոքների վրա նիստի ժամանակ ոչ ոք չէր կամենում ուշադրութիւն դարձնել և դուման վճռեց առանց հետևանքի թողնել գործը, անցնելով հերթական հարցերի։ Տեղական ռուս լրագիրները լսել են որ ձայնաւոր Զուբալով դիտաւորութիւն ունի, այդ պատճառով, գանգատվել նահանգական վարչութեանը դումայի, իր կարծիքով, ապօրինի վճռի դէմ։

Մենք մեր կողմից միայն հետևեալ հարց կառաջարկենք։ Եթէ, ճշմարիտ է, քաղաքային վարչութիւնը այդքան անկանոն կերպով է տանում իր գործերը, այդքան անկանոն և անհոգ կերպով պահում է գանձարանի հաշիները, եթէ նրա մատեաններն ու հաշիները այդքան խառն և անճիշդ են, ի՞նչ երաշխաւորութիւն կարող է ունենալ հարկատու քաղաքացին, որ քաղաքային վարչութեանը իր վճարվող տուրքերը կանոնաւոր և օրինաւոր կերպով են պահանջվում, ի՞նչ երաշխաւորութիւն կարող ենք ունենալ մենք ամենքս, որ մեզանից մինից պակաս չէ պահանջվում, իսկ միւսից աւելի, քան թէ մենք պէտք է մոցնենք քաղաքային գանձարանը, վերջապէս ի՞նչ երաշխաւորութիւն ունենք, որ մեզանից շատերից երկու, երեք անգամ չեն պահանջվում մի և նոյն վճարները։

Զը պէտք է մոռանանք, որ մեր քաղաքային գործերի դեկավարները, այդ բոլոր պարոնները, որոնք, ինչպէս յայտնվեցաւ, հասկացողութիւն չունեն ոչ թէ միայն կանոնաւոր, բանկային հաշւապահութեան մասին, բայց մինչև անգամ ամենափոքր հասկացողութիւն էլ չունեն ամենահասարակ, մեր անգրագէտ խանութատէրերից գործածվող հաշւապահութեան մասին, որ այդ բոլոր պարոնները ուսում առած, լուսաւորված, բարձրագոյն ուսում ստացած մարդիկ են։

Այժմ թող քաղաքային զգաստակութիւնը ինքն մտածէ ու դատէ. արդեօք հնարաւոր է իրան մեծ յոյսեր դնել իր ինտելիգենցիայի վրա, որ նա իր ամեն հասարակական գործերում իր համար դեկավար է ընտրում և որին նա իր ամեն գործերն է յանձնում։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՕՐԻՈՒՄ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ՊՐՕԳԻՄՆԱԶԻԱՅԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

—

Կովկասեան ուսումնական շրջանի պ. հոգաբարձուի թոյլտուութեամբ հասարակական և մասնաւոր միջոցներով Գօրի քաղաքում բացվում է չորս դասատանից և մի պատրաստականից բաղկացած օրիորդական պրոգիմնազիա։

Հոգաբարձական ժողովի կարգադրութեամբ պրոգիմնազիան բացվելու է օգոստոսի 30-ին։ Ծնողներն ու ազգականները, որոնք կամենում են իրանց աղջիկներին կամ ազգականներին դաստիարակել նոյն պրոգիմնազիայում, սոյն յայտարարութիւնը հրատարակելուց յետոյ մինչև օգոստոսի 25-ը, կարող են հասարակ թղթի վրա գրված խնդիրք տալ հոգաբարձական ժողովի պ. նախագահի անունով, որ է Անդրկովկասեան ուսուցչական դպրանոցի կառավարիչը. խնդիրքի հետ կցվում է նաև մետրիքականի քաղուածք կամ վկայականը։—Առաջին տարում բացվելի պրոգիմնազիան ունենալու է պատրաստական և առաջին դասատուններ, նաև երկրորդը, եթէ յարմարութիւն ունեցող ցանկացողները 15-ից պակաս չեն լինի։ Տարեկան վճարը պարտաւորիչ առարկաների համար լինելու է.—պատրաստականում 15 ռուբլի, առաջնում 20 ռ., երկրորդում 30 ռ.։—Փողերը պիտի առաջարկվին ամեն կէս տարուայ համար կանխիկ—օգոստոս և յունվար ամիսներում։ Երեխաները բերվում են ուսումնարան օգոստոսի 25-ին նոցա ուսմանը համապատասխանող դասարաններում տեղաւորելու համար։ Պատրաստական դասարանում ընդունվում են նաև բոլորովին անգրագէտ աղջիկներ 7-ից մինչև 12 տարեկան հասակի, իսկ միւս դասարաններում ըստ հարցաքննութեան 10—14 տարեկանները։

Օտարաքաղաքացիք կարող են իրանց երեխաներին զետեղել օրիորդ Խրուշչովի պանսիօնում—առանձին պայմանով փոխադարձ համաձայնութեամբ։

Պրոգիմնազիայի պարտաւորիչ առարկաներին պատկանում են՝ կրօնագիտութիւն ուղղափառ և հայ-լուսաւորչական դաւանութեանց, ռուսաց, վրաց և հայոց լեզուներ, թուաբանութիւն, երկրաչափութիւն, աշխարհագրութիւն, պատմութիւն, բնագիտութիւն, վայելչագրութիւն, նկար-

չութիւն, մարմնամարզութիւն, պար, երգեցողութիւն և ձեռագործ։ Կամաւոր առարկաների համար, այսինքն գաղղիերէն և գերմաներէն լեզուների ու երաժշտութեան համար նշանակվում է առանձին լրացուցիչ վճար, որի քանակութիւնը կախված կը լինի այս երեք առարկաներից մէկը ուսանել ցանկացողների թուից։ Պրոգիմնազիայի ուսումնական ընթացքը բոլորովին համապատասխան կը լինի Թիֆլիսի օրիորդական պրոգիմնազիայի նախագծին, որպէս զի այն օրիորդները, որոնք կը ցանկանան իրանց ուսումը շարունակել Թիֆլիսի օրիորդական գիմնազիայում—կարողանան ուղղակի V դասարանը մտնել։

Մտադրութիւն կայ ապագայում նոյն պրոգիմնազիայի մէջ բաց անել նաև մանկավարժական դասարաններ—երկու տարուայ ընթացքով, որպէս զի ցանկացողքը կարողանան իրաւունք ստանալ ուսուցչուհու պաշտօններ կատարելու քաղաքի կամ գիւղերի սկզբնական դպրոցներում։ Պրոգիմնազիայի կառավարչուհի հոգաբարձական ժողովից միաբերան ընտրված է իշխանուհի Մարիամ Գրիգորեան Մակայեվա, որ իր ուսումը ստացել է Պետերբուրգի առաջին օրիորդական գիմնազիայում և յայտնի է արդէն իր մանկավարժական փորձառութեամբ։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յունվարի 19-ին

Որպէս կարգադրող Բագուի մէջ 7-ին յունվարի տրված հայոց ներկայացման, ես, համաձայն ներկայացման մէջ մասնակցած երիտասարդութեան ցանկութեան, պատիւ ունեմ ուղարկել ձեզ 231 բուբլի, փոստի ծախսը հանած, կցելով այդ իմ նամակին և ներկայացման հաշիւը, որ և խնդրում եմ տպագրել ձեր լրագրում։

Յունվարի 7-ին Բագուի ժողովարանում յոգուտ Վանի սովատանջների և Մարգասիրական ընկերութեան գրադարանի տրված հայոց ներկայացման հաշիւը, որի զուտ արդիւնքը հաւասարապէս բաժանվեցաւ երկու մասի վրա։

Պատրաստված տոմսակներից 648 բուբլ գումարի մնացին չը ծախված 16 տոմսակ, իւրաքանչիւրը 1 ր. 50 կ. գնի, և 6 տոմսակ 1 բուբլիանոց, բոլորը 30 բուբլ գումարի։ Ծախվեցան տոմսակներ 618 բուբլու, աւելորդ աթոռների համար ստացվեցաւ 12 բուբլ, խօրերից 9 ր., աֆիշաներից 2 ր. 30 կ., աւելորդ տուած փող 1 ր։ Ընդամենը 642 ր. 30 կ.։

Ծախսը եղել է։ Հաշուով տրված նոր դեկօրացիայի նիւթերի համար 31 ր., դեկօրատորին և բանուորներին 20 ր., հիւանին 3 ր., աֆիշաներ և տոմսակներ տպելու, կպցնելու և տարածելու համար 20 ր., երաժշտութեանը 30 ր., լուսաւորութեան համար 27 ր., պարիկմախէրին 8 ր., 13 դիւժին աթոռների վարձ 13 ր., ծառաներին 11 ր., զգեստի համար 3 ր., պիէսաները բերել տալու համար հեռագիրների վճարը 6 ր. 60 կ., մանր ծախսերի համար 5 ր.։ Ընդամենը 177 ր. 60 կ.։

Ուրեմն զուտ արդիւնք մնում է 464 ր. 70 կ., որ բաժանելով երկուսի վրա, կը մնայ 232 ր. 35 կ., իսկ փոստի ծախսը հանելով 231 բուբլ, որ և ուղարկվում է սորա հետ «Մշակի» խմբագրութեանը, յոգուտ Վանի սովատանջներին յատկացնելու համար։ Միւս կէսը պատկանում է «Մարգասիրական» ընկերութեան գրադարանին։

Ներկայացմանը մասնակցած հայ երիտասարդութիւնը իւր ի սրտէ շնորհակալութիւնն է յայտնում պ. Գոնչարով արտիստին, այն ջանքերի համար, որ պարոնը, որ և է վարձից հրաժարվելով, գործ դրեց բեմը կազմակերպելու և նոր դեկօրացիաները պատրաստելու համար։

Թ. Անտոնով

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 3 փետրվարի

Անցեալ յունվարի 23-ին արուեստաւորների ժողովարանի դահլիճում տուած համեստ ընտանեկան երեկոն, որ նշանակված էր յոգուտ Կ. Պոլսոյ Միացեալ ընկերութեան, տուաց եկամուտ 442 ր.։

Դուրս հանելով այդ գումարից մուզիկայի, սաղանդարների և բուֆետի ծախքը—ընդամենը 124 ր. 50 կ., մնացեալ 317 ր. 50 կ. ուղարկելով ձեզ, խնդրեմ անօրինէք հասուցանելու ընկերութեան։

Չեմ կարող խորին շնորհակալութիւնս չը յայտնել արուեստաւորների կլուբի ժողովին, որի ներկայացուցիչները հասկանալով այսպիսի գործոց նպատակը ժողովարանի դահլիճը և սեղանատունը ձրիաբար առաջարկեցին երեկոյի համար բացի լուսաւորելուց, որի ծախքը ընդամենը 25 բուբլի ես ընդունեցի ինձ վրա. մի և նոյն ժամանակ կը յայտնեմ պ. Մարտիրոսեանցին իմ շնորհակալութիւնս, որ նա տպեց տոմսակները առանց վարձատրութեան։

Աղէքսանդր Մէլիք-Փաշայեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օր, փետրվարի 7-ին ուղարկեցինք Կիւլպէնկեան եղբայրների առևտրական տան ձեռքով, որի ներկայացուցիչն է Թիֆլիսում Խուպեսերեան Կարապետ աղան, 1000 բուբլ յոգուտ Կ. Պոլսի «Միացեալ Ընկերութեան»։

—

Մեզ խնդրում են յայտնել որ փետրվարի 12-ին, հինգշաբթի օր լինելու է Արծրունու թատրոնում ռուսաց թատրոնական ներկայացումն, բարեգործական նպատակով, որին մասնակցելու են ռուսաց թատրոնական խմբի ամենալաւ ոյժերը։ Կը ներկայացնեն Շպաժինսկու «Ֆոֆան» նոր պիէսան, որ մեծ ընդունելութիւն գտաւ Մոսկվայում և Ս. Պետերբուրգում։

—

Ինչպէս յայտնի է ընթերցողին, փետրվար ամսից սկսած այլ ևս լինելու չէ Թիֆլիսում ռուս օպերա, այլ նրա տեղ լինելու են ռուսաց դրամատիկական ներկայացումները։ Պ. Պալմ արդէն տպված յայտարարութիւններով յայտնել է թէ ովքեր են լինելու թատրոնական խմբի մասնակցողները։ Դերասանուհիների թուում մենք կարդացինք և Նեմիրով-Բալֆ տիկնոջ անունը։

—

«Русскій Курьеръ» լրագրում կարդում ենք, որ Նորին կայսերական Բարձրութեան կովկասեան փոխարքայի առաջարկութեամբ, կառավարութիւնը դիտաւորութիւն ունի բնակեցնել Ղարսի նահանգում մի քանի հազար ռուս երկրագործ ընտանիքներ։

—

Մայրաքաղաքների ռուս լրագրութիւնը լի է հանգուցեալ Դոստոեվսկի մատենագրի թէ՞կեանքի և թէ նրա թաղման հանդիսի նկարագրութիւններով։ Մի ժամանակ Դոստոեվսկի մեծ հռչակ ունէր ռուսաց գրականութեան մէջ։ Նրա բոմանները, մանաւանդ որոնք հասարակական և իրաւաբանական նշանաւոր հարցեր էին քննադատում, ինչպէս օրինակ «Записки мертваго дома» և «Преступленіе и наказаніе» որոնցից առաջինի մէջ քննված է բանտարկվածների կամ աքսորվածների դրութիւնը, իսկ երկրորդը յանցանքի հոգեբանական քննութիւն է, մեծ արձագանք էին գտել իրանց ժամանակին ռուս հասարակութեան մէջ։ Բայց վերջին տարիները Դոստոեվսկի ընկաւ հիւանդոտ միստիցիզմի մէջ և կորցրեց իր բոլոր հայեացքների թարմութիւնը, իր նախկին առողջ դատողութիւնը։ Նրա թաղման հանդիսին ներկայ էին՝ Ս. Պետերբուրգի բոլոր թէ արական և թէ իգական դպրոցները, համալսարանը, բժշկական ակադէմիան, տեխնօլոգիական դպրոցը, բանտի վարչութեան ներկայացուցիչները, իրաւաբանական ընկերութիւնները, Մոսկվայի պատգամաւորութիւնը. գրողների ընկերութիւնը, Ս. Պետերբուրգի բոլոր թատրոնների դերասանները, իգական բժշկական դպրոցը և այլն և այլն։

—

Կառավարութիւնը նշանակել է Դոստոեվսկու այրիին 2000 բուբլ տարեկան թոշակ նրա ամբողջ կեանքի համար, իսկ հանգուցեալի զաւակները ընդունված են դպրոցներում թագաւորական հաշուով։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ գրում են, որ այդտեղ հմուտ բժիշկ չը լինելու պատճառով այլ և այլ հիւանդութիւններ շատ զոհեր են տանում։

—

Մեզ գրում են որ Նոր-Բայազէտի հայոց հոգևոր դպրոցը շատ անմխիթար դրութեան մէջ է։ Ցեսուչը ամիսներով չէ երևում դպրոցում, իսկ հոգաբարձուները միայն այն ժամանակ են ներկայանում, երբ հարկաւոր է աշակերտներից վարձ ստանալ։

—

ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ մեզ գրում են որ յունվարի 24-ին այդտեղ հայոց թատրոնական ներկայացումն է եղել։ Խաղացին «Շուշանիկ» ողբերգութիւնը և «Բռնի ամուսնութիւն» կատակերգութիւնը։ Ներկայացումն շատ անաջող անցաւ։

—

Այն լուրը որ իբր թէ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի այլ ևս չը թոյլ տալ նոր լրագիրների հիմնվելուն Ռուսաստանի մէջ, սուտ յայտնվեցաւ։ Ցունվար ամսին Ռուսաստանի այլ և այլ գաւառական քաղաքներում թոյլ տրվեցան մինչև 15 նոր լրագիրներ՝ ռուսերէն, գերմաներէն և էստերէն լեզուներով։

—

Զարմանալի հաշտեցնող ոյժ է մահը։ Դեռ մի քանի շաբաթ սրանից առաջ ոչ մի ռուսաց լրագիր կամ ամսագիր չը կար որ չը յարձակվեր Դոստոեվսկու վրա նրա վերջին գրուածների համար, որոնք չնչում են միստիցիզմի ոգով և ատելութեան զգացմունքով դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը։ Ամենայայտնի լրագիրները և ամսագիրները պարզապէս կասկած էին յայտնում որ Դոստոեվսկու ուղեղը հոգեկան անբնական դրութեան մէջ է։ Իսկ այժմ, երբ նա վախճանվել է, ամբողջ ռուսաց մամուլը այն ծայրայեղութեանն է հասնում, որ մոռանալով հանգուցեալի ճշմարիտ գեղեցիկ և հանճարեղ հին գրվածները, հաւատացնում է որ Դոստոեվսկու մբտաւոր կարողութիւնը մինչև մահը թարմ էր մնացել, հաւատացնում է որ նրա ամենալաւ գրուածները նրա վերջին ստեղծուածներն են, որոնց մի քանի շաբաթ սրանից առաջ նոյն մամուլը խանգարված ուղեղի ծնունդ էր համարում։

—

Փետրվարի 8-ին վրաց թատրոնական խումբը կրկնեց Արծրունու թատրոնում «Ժոզեֆ» պիէսան։ Նոյն երեկոն խաղացին և Ա. Ներետելիի «Ցարակուսանք» վերնագրով վոդեվիլը։ Այս վերջինը թէև տեղական կեանքից, բայց ֆրանսիական ոգով գրված և փոքր ինչ անբարոյական ակնարկութիւններով մի պիէսա է։ Զարմանալի է թէ որքան քիչ հասկացողութիւն ունեն թէ հայ և թէ վրացի ընտանիքները, որ այդ տեսակ պիէսաներին բերում են իրանց հետ իրանց երեխաներին և նստացնում լօժաներում։

—

Ամբողջ ռուսաց լրագրութիւնը խօսում է այն զեղծումների մասին, որոնք յայտնվեցան Կազանի նահանգում այդտեղի նահանգապետ Սկարիատինի կառավարութեան օրով։ Սկարիատին արդէն հրաժարական է տուել։ Յայտնվեցաւ օրինակ, որ մեծ գողութիւններ էին լինում իգական Գիմնազիայում, որի կառավարիչ տիկինը գողացած փողերը հասցնում էր նահանգապետի կնոջ, որ այդ փողերով շքեղ կերպով ապրում էր և ամենաշռայլ պատուէրներ էր տալիս Կազանի մոդային մագազիններում։ Իրան նահանգապետ Սկարիատինի կաշառակերութեան և գողութեան այլ և այլ տեսակների, բռնութիւնների, կամայականութեան ու զեղծումների թիւ ու համար չը կայ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔՈՒՐԴԱՀԱՅՔ

—

Հայք իւրեանց անկախութեան ժամանակներն այլ և այլ ազգեր կը լինած են։ Նոքա իւրեանց հայրենի երկրին մէջ մեծամասնութիւն կը կազմէին, տիրող ցեղն էին, և բացառիկ ոյժ գտնելով քաղաքական անկախութեան մէջ, անհակառակելի և գրեթէ բնական առաւելակշռութիւն մի ունէին նոյն երկրին մէջ բնակող այլ փոքր ժողովրդոց վրայ, և ըստ որում հզօրը միշտ տկարը կլնած է այն ժամանակներն՝ երբ տկարը, քաղաքակրթական յառաջդիմութեանց շնորհիւ, իւր անհատական գոյութեան համար դեռ զօրութենէ ուրիշ երաշխաւորութիւններ չունէր, ուստի Հայք այլ երբեմն կլնած են ուրիշ փոքր ժողովուրդներ որոց վրայ իշխանութիւն ունէին։ Ցատր երկիրներէն զալով Հայաստանի մէջ հաստատուած գաղթականութիւնք ալ նոյն բաղդն ունեցած են։ Արդ Հայք, իւրեանց անկախութիւնը կորսնցնելէ ի վեր, տուժած են զայս։ Հայք իւրեանց կարգին կը լինուած են իշխանութեամբ կամ թուով հզօրագոյն ազգերէ։ Այսպէս, յիշատակելով այն պարագայներն և եթ, որոց գործնական օրինակներն այժմ իսկ մեր աչաց ներքև ունիմք, Հայք արևելեան և հիւսիսային արևելեան Հայաստանի մէջ խառնուած են Կաւկասեան ցեղերու հետ, գլխաւորապէս վրաց հետ, և հազարաւոր վրացիներ կան այժմ որք գիտեն թէ իւրեանց նախահարք Հայ էին. հիւսիսային Հայաստանի մէջ և Հայաստանէն դուրս այլ տեղեր, Հայք թուրք եղած են հազարաւորներով այն բարեբաղդաբար մոռցուած ժամանակներն՝ երբ խալամութիւնը զինու զօրութեամբ կը յառաջդիմէր։ Գլխաւորապէս, Կարսի, Այտահանի, Կարնոյ և Տրապիզոնի նահանգաց թուրքերուն մի մեծ մասն այս տեսակէն են, որպէս կապացուցուի ո՛չ միայն պատմութեամբ, այլ և նոցա դէմքով, աւանդութեամբք և մինչև իսկ լեզուով։ Արևմտեան Հայաստանի մէջ Հայք ցոյն եղած են, և Հայկական գաւառաց մէջ ցոյներն ընդհանրապէս Հայ սերունդէ լինել կը կարծուին։ Բայց նոյն իսկ Հայաստանի մէջ, մանաւանդ Հայաստանի հարաւային մասանց մէջ, հազարաւորներով Հայք Քուրդ եղած են։ Ապահովապէս կրնամք ասել թէ Տէրսիմի Քուրդք գրեթէ ամբողջապէս Հայ սերնդէ են, որպէս կապացուցուի բազմաթիւ նշաններով։ Նոյն բանը կրնամք ասել Վասպուրականի, Տարոնոյ և Միջագետաց Քուրդերուն մի կարևոր մասին համար ալ։ Այն Հայք որք դարեր առաջ քուրդացած են, այսօր գրեթէ անճանաչելի են մեզ, թէև յոյժ մերձաւորութիւն ունենան այլ և այլ նկատմամբք։ Նոքա բռնութեանց ժամանակներն հզօրագոյն ցեղի մի առջև տեղի տալով իւրեանց փրկութիւնը գտնել ուզած են։ Այդ տեսակ բռնութիւնք այսօր չը կան. բայց այն ժամանակներէն կտակեալ վիճակն այժմ իսկ կը շարունակէ հարաւային Հայաստանի այլ և այլ գաւառաց մէջ. հազարաւորներով կը համրուին հարազատ Հայեր, որք ամեն կողմէ Քուրդերէն շրջապատեալ, հետզհետէ քուրդանալու վրայ են. արդէն կորուսած են իւրեանց մայրենի լեզուն, Հայկական անունները իսկ, և այն քրիստոնէական կրօնն, որով ևեթ կը զանազանին իւրեանց Քուրդ դրացիներէն, յոյժ նսեմ գաղափար ունին նորա վրայ։ Այս Հայերն են որ ՔՈՒՐԴԱՀԱՅՔ անուան ներքև կը ճանչուին։ Նոքա կը բնակին՝ Տարոնոյ կողմն՝ ի Խոյթ, ի Սասուն, ի Խիզան, Լայլն. Վասպուրականի կողմն՝ ի Մոկս, ի Շատախ, Յաղբակ, Լայլն. Միջագետաց կողմը, Տիարպէքիրի հարաւային գաւառներն, և ի Մարտին, ի Ճէզիրէ, Լայլն։ Այս տեղերու Հայ ժողովրդոց նիւթական վիճակին խեղճութեան հաւասար բան մի եթէ կայ, այն ալ նոցա բարոյական և ազգային ողբալի վիճակին խեղճութիւնն է։

Արդ, եթէ թող տամք որ իրաց վիճակն այսպէս շարունակի, այդ հազարաւոր Հայերն, —իւրեանց կարիճութեամբ, տոկունութեամբ, հաւատարմութեամբ և այլ հանգամանօք Հայութեան այդ ընտրելագոյն զա-